ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությունը

Ընդդեմ «Ազգ» օրաթերթի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ դիմումի վերաբերյալ

Քննարկելով ընդդեմ «Ազգ» օրաթերթի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ դիմումը՝ թերթի 2007 թվականի փետրվարի 9-ի համարի «Մի' ստիր, հատկապես երբ ոտքերդ լեզվիցդ կարճ են», 2007 թվականի փետրվարի 22-ի համարի՝ «Սպանության շահարկումը, անկախ Դինքի դավանանքից, նողկալի արարք է», 2007 թվականի մայիսի 15-ի համարի՝ «Հերձված «Ավետարանական» եւ 2007 թվականի փետրվարի 3-ի «Աղանդավորներն ու գլոբալիստները ազգային եկեղեցու դեմ» հոդվածներում կրոնական անհանդուրժողականություն սերմանելու, ինչպես նաեւ կանխամտածված սուտ տեղեկությունների վերաբերյալ, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը եզրակացնում է.

Յուրաքանչյուր մասնավոր հրատարակություն կարող է ունենալ իր ուղղվածությունը եւ արտահայտել խմբագրական տեսակետը՝ հասարակական ցանկացած խնդրի վերաբերյալ: Այս առումով ընդունելի է կրոնական թեմատիկայի վերաբերյալ «Ազգ» օրաթերթի ուղղվածությունը եւ այն հետեւողականորեն լուսաբանելը, սակայն թերթը փաստերը ներկայացնելիս եւ որակումներ տալիս (նման թեմաների դեպքում առավել եւս) պետք է մեծ նրբանկատություն ցուցաբերի:

Այսպես՝

1. 2007 թվականի փետրվարի 2-ին կայացած «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» օրինագծի հասարակական քննարկմանը վերաբերող՝ «Աղանդավորներն ու գլոբալիստները ազգային եկեղեցու դեմ» հոդվածը («Ազգ» 03.02.2007) օբյեկտիվորեն չէր արտացոլում քննարկման ընդհանուր մթնոլորտը: Հաշվի չէր առնված, որ դրան մասնակցում էին տարբեր մոտեցումներ եւ հայացքներ ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք հիմքեր ունեին իրենց վիրավորված զգալու թերթի կատեգորիկ գնահատականներից:

2. «Մի' ստիր, հատկապես երբ ոտքերդ լեզվիցդ կարճ են» հոդվածը («Ազգ», 9 փետրվարի 2007 թ.) պարունակում է կտրուկ գնահատականներ, ինչի համար բավարար հիմքեր չկան : «Հերձված «Ավետարանական» հոդվածը («Ազգ», 15 մայիսի, 2007 թ.) ամբողջությամբ Հայ Ավետարանական եկեղեցու դեմ է ուղղված եւ, կրոնական անհանդուրժողականությունից զատ, ոչ ստույգ տեղեկություն է պարունակում, թե ԱՄՆ դեսպանատան շենքը հանձնվել է Հայ ավետարանականներին, այն դեպքում, երբ շենքը գնվել է աճուրդով:

3. Վերոհիշյալ, ինչպես նաեւ՝ դիմումատուի բողոքում մեջբերված՝ թերթի այլ պնդումները առանձին վերցրած կարող էին ընդունելի լինել որպես զուտ լրագրողական դիտարկումներ կամ եզրակացություն, սակայն ամբողջության մեջ դրանք նախապաշարված վերաբերմունքի տպավորություն են թողնում:

4. Հարգելով «Ազգ» թերթի՝ կրոնական թեմատիկային անդրադառնալու եւ սեփական տեսակետները ներկայացնելու իրավունքը, Դիտորդ մարմինը հարկ է համարում հիշեցնել 2007 թվականի մարտի 10-ին ընդունված Վարքականոնի 5.1 եւ 5.2 կետերը.

« 5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն»,

ինչպես նաեւ՝ 6.1 եւ 6.2 կետերը՝

«6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու եւ պատասխանի հնարավորություն ընձեռելու այն անձանց, ում հասցեին մեղադրանքներ են եղել հրապարակումներում»:

Ընդունվել է ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2007 թվականի սեպտեմբերի 12-ի նիստում

Սույն եզրակացությունը տպագրվել է «Ազգ» օրաթերթում 2007 թվականի սեպտեմբերի 19-ին